



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 մայիսի 2011 թվականի N 674-Ն

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԾՐԱԳԻՐԸ (ՀԱՐՑԱՇԱՐԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Մարդահամարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի ծրագիրը (հարցաշարը)՝ համաձայն հավելվածի:
2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդին Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի հաստատած ծրագրի (հարցաշարի) հիման վրա մեկամսյա ժամկետում հաստատել Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի հարցաթերթը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2011թ. մայիսի 27  
Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԾՐԱԳԻՐ (ՀԱՐՑԱՇԱՐ)

### I. ՀԱՍՑԵԱՄԱՍ

1. Մարդահամարի կազմակերպման տեղամասերի համարները (մարդահամարի տեղամաս, հրահանգչական տեղամաս, հաշվային տեղամաս)
2. Տնային տնտեսության հասցեն՝ մարզը, տարածաշրջանը, համայնքը, բնակավայրը/վարչական շրջանը, հեռախոսահամարը, եթե կազմակերպություն է, ապա նաև կազմակերպության անվանումը

### II. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ազգանունը, անունը, հայրանունը
2. Մարդահամարի հաշվառման պահին անձը՝
  - մշտապես ներկա է
  - ժամանակավոր ներկա է
  - բացակա է
3. Մարդահամարի հաշվառման պահին բնակավայրից բացակայող անձի համար՝
  - 3.1. բացակայության տևողությունը (ամիսներով)
  - 3.2. պատճառը՝
    - աշխատանք
    - անձնական/ընտանեկան
    - ուսում
    - հյուր
    - գործուղում
    - զբոսաշրջիկ
    - այլ
  - 3.3. մարդահամարի հաշվառման պահին անձի գտնվելու վայրը՝ երկիրը, Հայաստանում գտնվելու դեպքում՝ մարզը
4. Մարդահամարի հաշվառման պահին ժամանակավոր ներկա գտնվողի համար՝
  - 4.1. գտնվելու տևողությունը (ամիսներով)
  - 4.2. նպատակը
    - աշխատանք
    - անձնական/ընտանեկան
    - ուսում
    - հյուր
    - գործուղում
    - զբոսաշրջիկ
    - այլ
  - 4.3. մշտական բնակության վայրը՝ երկիրը, Հայաստանում գտնվելու դեպքում՝ մարզը և բնակավայրը

**5. Ազգակցական կապը տնային տնտեսության առաջինը գրված անդամի հետ՝**

- տնային տնտեսությունում առաջինը գրված անձ նրա
  - կինը/ամուսինը
  - դուստրը/որդին
  - խնամակալության տակ գտնվող երեխան
  - մայրը/հայրը
  - քույրը/ եղբայրը
  - սկեսուրը/սկեսրայրը/զոքանչը/աները
  - հարսը/փեսան
  - տատը/պպա
  - թոռը
  - այլ ազգական
  - ոչ ազգական
  - սենյակակից (միայն խմբային տնտեսությունների համար)

**6. Սեռը**

**7. Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը**

**8. Ծննդավայրը՝ երկիրը, Հայաստանի դեպքում՝ մարզը և բնակավայրը**

**9. Քաղաքացիության երկիրը՝**

*երկքաղաքացիների համար, նշել նաև քաղաքացիության երկրորդ երկիրը*

**10. Ազգությունը՝**

- |         |              |                           |
|---------|--------------|---------------------------|
| • հայ   | • ուկրաինացի | • հրեա                    |
| • եզդի  | • քուրդ      | • գերմանացի               |
| • ռուս  | • լեհ        | • պարսիկ                  |
| • ասորի | • բելոռուս   | • այլ                     |
| • հույն | • վրացի      | • հրաժարվում է պատասխանել |

**11. 1) Մայրենի լեզուն**

- հայերեն
- եզդիերեն
- ռուսերեն
- ասորերեն
- հունարեն
- ուկրաիներեն

**2) Այլ լեզու, որին ազատ տիրապետում է՝**

- քրդերեն
- լեհերեն
- բելոռուսերեն
- վրացերեն
- եբրաերեն
- անգլերեն
- ֆրանսերեն
- գերմաներեն
- իսպաներեն
- պարսկերեն
- թուրքերեն
- այլ
- հրաժարվում է պատասխանել

**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՉԵՆ ԼՐԱՑՎՈՒՄ ՄՆԱՑՅԱԼ ՀԱՐՑԵՐԸ**

**12. Համարում է արդյոք անձն իրեն որևէ կրոնի, եկեղեցու կամ ուղղության հետևորդ՝**

*Եթե “համարում է”, ապա նշել.*

- |                  |                 |   |
|------------------|-----------------|---|
| ✓ հայ առաքելական | ✓ եհովայի վկա   | ✓ հեթանոսական                           |
| ✓ կաթոլիկ        | ✓ բողոքական     | ✓ մահմեդական                            |
| ✓ ուղղափառ       | ✓ մորմոն        | ✓ հուդայական                            |
| ✓ նեստորական     | ✓ մոլոկան       | ✓ Կրիշնյա գիտակցության կամ Հարե կրիշնյա |
| ✓ ավետարանական   | ✓ շար-ֆադինական | ✓ SU(տրանսցենդենտալ մեդիտացիա)          |
|                  |                 | ✓ այլ                                   |

- չի համարում
- հրաժարվում է պատասխանել

### **13. Ծննդյան օրվանից տվյալ բնակավայրում անձի անընդհատ բնակվելը՝**

- այո
- ոչ

#### **Եթե «ոչ», ապա նշել**

13.1. տարեթիվը, որից սկսած անընդհատ բնակվում է տվյալ բնակավայրում

13.2. նախորդ բնակության վայրը՝ Երկիրը, Հայաստանի դեպքում՝ մարզը և բնակավայրը

13.3. ինչպիսի բնակավայրից է եկել՝

- քաղաքային
- գյուղական

13.4. բնակության վայրը փոխելու հիմնական պատճառը

- այլ երկրներից պատերազմական գործողությունների
- այլ երկրներից ռասսայական, ազգային, կրոնական պատկանելիության, սոցիալական որևէ խմբի անդամակցության կամ քաղաքական հայացքների համար հալածանքի ենթարկվելու հիմնավոր վախի
- ընտանեկան
- հայրենադարձություն
- այլ

### **14. Գոյության միջոցի հիմնական աղբյուրը՝**

- վարձու աշխատանքը
- ինքնազբաղվածությունը գյուղացիական տնտեսությունում
- ինքնազբաղվածությունն այլ ոլորտներում
- սեփականությունից եկամուտը (գյուղացիական տնտեսությունից, վարձակալության դիմաց ստացված վարձավճարներ, տոկոսավճարներ, շահաբաժիններ)
- վարկերի, խնայողությունների օգտագործում և կապիտալի (այդ թվում նաև գույքի) վաճառք
- կենսաթոշակ
- նպաստ պետական մարմնից
- նպաստ ոչ պետական աղբյուրից
- կրթաթոշակ
- պետական ապահովության (պահպանություն) ներքո
- ոչ պետական բարեգործական հասարակական կազմակերպությունների ապահովության (պահպանություն) ներքո

#### **Դրամական օգնություն**

- ✓ պետական աղբյուրից
- ✓ արտերկրում բնակվող հարազատներից, բարեկամներից, ծանոթներից
- ✓ Հայաստանում բնակվող հարազատներից
- խնամքի տակ
- այլ աղբյուր

**15-17 ՀԱՐՑԵՐԸ ԼՐԱՑՎՈՒՄ ԵՆ 6 ԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**

**15. Կրթական մակարդակը, գիտական աստիճանը**

- չունի տարրական կրթություն
- տարրական կրթություն
- հիմնական կրթություն
- միջնակարգ կրթություն
- նախնական մասնագիտական (արհեստագործական)
- միջին մասնագիտական
- բարձրագույն մասնագիտական (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս)
- հետբուհական մասնագիտական (հետազոտող, ասպիրանտուրան ավարտած, սակայն թեզ չպաշտպանած)
  - գիտության թեկնածու
  - գիտության դոկտոր

**16. Տարրական կրթություն չունեցողների համար՝ գրաճանաչ է**

- այո
- ոչ

**17. Ուսումնական հաստատություն հաճախելը՝**

- *եթե «սովորում է», ապա նշել ուսումնական հաստատության տեսակը՝*
  - ✓ տարրական դպրոց
  - ✓ միջին դպրոց
  - ✓ ավագ դպրոց
  - ✓ նախնական մասնագիտական (արհեստագործական)
  - ✓ միջին մասնագիտական
  - ✓ բարձրագույն մասնագիտական
  - ✓ հետբուհական մասնագիտական
- չի սովորում

**18-20 ՀԱՐՑԵՐԸ ԼՐԱՑՎՈՒՄ ԵՆ 15 ԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**

**18. Ամուսնական կարգավիճակը՝**

- երբևէ չամուսնացած
- ամուսնացած (գրանցված)
- ամուսնացած փաստացի (առանց գրանցման)
- միայն եկեղեցու կանոնական ծեսով իրագործված ամուսնություն
- այրի/կնակորոյս
- ամուսնալուծված (գրանցված)
- բաժանված (առանց գրանցման)

**Իգական սեռի ներկայացուցիչների համար նշել**

**19. Քանի երեխա է ծնել**

**20. Նրանցից քանիսն են ողջ**

**21-28 ՀԱՐՑԵՐԸ ԼՐԱՑՎՈՒՄ ԵՆ 15-75 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**

21. Աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք ունենալը մարդահամարի հաշվառմանը նախորդող շաբաթվա՝ հոկտեմբերի 4-11-ի ընթացքում (ներառյալ աշխատանքից ժամանակավորապես բացակայողները)

- այո
- ոչ

**Եթե «այո»**

22. Հիմնական աշխատավայրի՝ կազմակերպության, հիմնարկի (կամ դրա մասնաճյուղի) տնտեսական գործունեության տեսակը

23. Զբաղմունքը հիմնական աշխատավայրում

24. Զբաղվածության կարգավիճակը

- վարձու աշխատող
- գործատու (սեփականատեր՝ վարձու աշխատողի (աշխատողների) մշտական ներգրավմամբ)
- ինքնազբաղված գյուղացիական տնտեսությունում
- ինքնազբաղված այլ գործունեությամբ
- ընտանիքի օժանդակող անդամ
- արտադրական/սպառողական կոոպերատիվի անդամ
- այլ

**Աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք չունեցող անձանց համար**

25. Հաշվառմանը նախորդող վերջին 4 շաբաթների ընթացքում փնտրել է արդյոք աշխատանք՝

- այո, փնտրել է վճարովի աշխատանք
- այո, փորձել է սկսել սեփական գործ
- ոչ

**Եթե փնտրել է աշխատանք, ապա՝**

26. Առաջին անգամ

- այո
- ոչ

27. Եթե առաջարկվի համապատասխան աշխատանք, պատրաստ է անցնել աշխատանքի առաջիկա երկու շաբաթների ընթացքում

- այո
- ոչ

**Եթե չի փնտրել աշխատանք, ապա՝**

**28. Նշել պատճառը՝**

- գտել է աշխատանք և կանցնի աշխատանքի առաջիկա 2 շաբաթում
- դիմել է աշխատանքի ընդունվելու խնդրանքով և սպասում է պատասխանի
- պատրաստվում է հեռանալ հանրապետությունից
- պատրաստվում է տեղափոխվել ՀՀ-ում այլ բնակավայր
- վարում է տնային տնտեսություն
- աշխատանք գտնելու հույս չունի
- չգիտի՝ որտեղ կամ ինչպես փնտրել աշխատանք
- առաջարկվող աշխատանքի վարձատրությունը բավարար չէ
- չունի մասնագիտական համապատասխան հմտություններ
- աշխատելու անհրաժեշտություն/ ցանկություն չունի
- սովորում է
- տարիքային/ առողջական
- այլ

**III. ՀԱՐՑԵՐ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Բ.1. Ում սեփականությունն է հանդիսանում բնակելի միավորը՝**

- տվյալ տնային տնտեսության անդամի (անդամների)
- պետության
- համայնքի
- իրավաբանական անձի
- այլ անձի (անձանց)
  - անօթևան է

**Բ.2. Բնակելի շինության տեսակը՝**

- բնակելի տուն (առանձնատուն)
- բնակելի տան մի մաս
- բազմաբնակարան շենքի բնակարան
- բնակարանի մի մաս
- տնակ/ ժամանակավոր կացարան
- համատեղ բնակության շինություն
- հանրակացարան
- այլ՝ բնակության համար հարմարեցված շինություն

**Բ.3. Շահագործման հանձնման տարին՝**

- Մինչև 1950թ.
- 1951-1970
- 1971-1980
- 1981-1990
- 1991-2000
- 2001-2011թթ.

**Բ.4. Շինության արտաքին պատերի շինանյութը՝**

- |         |           |                   |
|---------|-----------|-------------------|
| • քար   | • մոնոլիտ | • խառնակազմ նյութ |
| • պանել | • փայտ    | • այլ             |

**Բ.5. Տնային տնտեսության զբաղեցրած սենյակների քանակը**

**Բ.6. Բնակելի միավորի ընդհանուր մակերեսը, քառ.մ**

**Բ.7. Հիմնական (ստացիոնար) հեռախոսի առկայությունը**

- այո
- ոչ

**Բ.8. Համակարգչի առկայությունը**

- այո
- ոչ

**Բ.9. Համակարգչի առկայության դեպքում, ինտերնետին միացված լինելը**

- այո, մշտապես
- այո, բայց ոչ մշտապես
- ոչ

**Բ.10. Բնակելի միավորի ջեռուցման հիմնական միջոցը՝**

- ջեռուցման անհատական համակարգ
- կենտրոնացված ջեռուցում
- գազի վառարան

- էլեկտրական տաքացուցիչ
- փայտով ջեռուցվող վառարան
- աթարով ջեռուցվող վառարան
- այլ

**Բ.11. Ջրամատակարարման հիմնական աղբյուրը՝**

- կենտրոնացված ջրամատակարարում բնակելի միավորում
- կենտրոնացված ջրամատակարարում շենքում, բայց ոչ բնակելի միավորում
- բերովի/գնովի ջուր
- ջրակուտակման սեփական համակարգ
- գետեր/աղբյուրներ
- ջրհոր
- այլ

**Բ.12. Ջրհեռացման (կոյուղացման) համակարգը՝**

- միացված է կոյուղու կենտրոնացված համակարգին
- ունի տեղական (լոկալ ) ցանց
- այլ

**Բ.13. Լոգասենյակի կամ ցնցուղի առկայությունը՝**

- այո, բնակելի միավորում
- այո շենքում, բայց ոչ բնակելի միավորում, միայն տվյալ տնային տնտեսության օգտագործման
- այո շենքում, բայց ոչ բնակելի միավորում, այլ տնային տնտեսության հետ համատեղ օգտագործման
- այո շենքից դուրս, միայն տվյալ տնային տնտեսության օգտագործման
- այո շենքից դուրս, այլ տնային տնտեսության հետ համատեղ օգտագործման
- ոչ

**Բ.14. Ջուգարանի առկայությունը՝**

Ողողվող

- բնակելի միավորում, միայն տվյալ տնային տնտեսության օգտագործման
- բնակելի միավորում, այլ տնային տնտեսության հետ համատեղ օգտագործման
- բնակմիավորից դուրս, միայն տվյալ տնային տնտեսության օգտագործման
- բնակմիավորից դուրս, այլ տնային տնտեսության հետ համատեղ օգտագործման

Չողողվող

- միայն տվյալ տնային տնտեսության օգտագործման
- համատեղ օգտագործման
- այլ

**Բ.15. Աղբահանությունը՝**

Շենքի աղբատար խողովակով

- կանոնավոր հեռացվող
- անկանոն հեռացվող

Այլ ճանապարհով

- թափվում է կանոնավոր հեռացվող աղբարկղը



- թափվում է անկանոն հեռացվող աղբարկղը
- այլ

#### **IX. ՀԱՐՑԵՐ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՊԱՀԻՆ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Գ.1.** Արդյոք տնային տնտեսությունը մշակում է գյուղատնտեսական մշակաբույսեր իրենց կողմից տնօրինվող հողերում (սեփական, ներառյալ տնամերձ, վարձակալված՝ վարձավճարով կամ առանց վարձավճարի) կամ զբաղվում է կենդանաբուծությամբ սեփական սպառման, վաճառքի թե այլնի համար

- այո
- ոչ

**Գ.2.** Լրացնել տնային տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակները (գլուխ)

- խոշոր եղջերավոր անասուններ, ընդամենը  
որից՝  կովեր  
 գոմեշներ
- խոզեր
- ոչխարներ
- այծեր
- թռչուններ
- մեղվաընտանիքներ (փեթակ, հատ)

**Գ.3.** Լրացնել տնային տնտեսության սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի չափերը (անկախ նրանից մշակվում են թե ոչ) ներառյալ վարձակալության տրվածը (հա՝ 0.00 ճշտությամբ)

**Գ.3.1.** ընդամենը գյուղատնտեսական նշանակության հողեր  
այդ թվում՝

- վարելահող
- բազմամյա տնկարկ  
 պտղատու այգի և հատապտղանոց  
 խաղողանոց
- բնական խոտհարք
- արոտավայր

**Գ.3.2.** տնամերձ հող

**Գ.4.** Տնային տնտեսության ձկնորսությամբ, ձկնաբուծությամբ (ակվակուլտուրաների արտադրությամբ) զբաղվելը

- այո
- ոչ

#### **X. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ՏՐՎՈՂ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ**

**Դ.1.** Վերջին 12 ամիսների ընթացքում արտերկրից դրամական միջոցներ ստանալը՝

- այո, կանոնավոր
- այո, ժամանակ առ ժամանակ
- այո, հազվադեպ
- ոչ

**Դ.2. Վերջին 12 ամիսների ընթացքում, տնային տնտեսությունում արձանագրված՝**

կենդանի ծնունդ (ծնունդներ)

2.1. այո, գրանցված է ՔԿԱԳԳ-ում *(թիվը)*

2.2. այո, գրանցված չէ ՔԿԱԳԳ-ում *(թիվը)*

2.3. ոչ

մահվան դեպք (դեպքեր)

2.4. այո, գրանցված է ՔԿԱԳԳ-ում *(թիվը, սեռը, տարիքը)*

2.5. այո, գրանցված չէ ՔԿԱԳԳ-ում *(թիվը, սեռը, տարիքը)*

2.6. ոչ

**Դ.3. Տնային տնտեսության կազմում կան արդյոք, օրենսդրությամբ սահմանված կարգով տրված, հաշմանդամության կարգավիճակ ունեցող անձինք**

**3.1** այո, նշել թվաքանակը, նրանց հերթական համարներն ըստ S/S հարցաթերթի <<Ա>> սյունակի

**3.2.** ոչ